

եւ իւր ժամանակակիցը: Եզնիկ՝ իմաստասէր միտք, կը մերժէ իսկական անսրբութեան գոյութիւնն արարածոց մէջ: Ըստ իրեն՝ «չիք ինչ պիղծ ի կերակրոցն». եւ եթէ հրէական օրէնքը զոմանս պիղծ կը կոչէ, «իբր ոչ եթէ պիղծ ինչ բնութեամբ էին, կ'ըսէ, այլ չախորժականսն մտաց մարդկան պիղծս կոչէ». եւ անոր համեմատ օրէնքը զրուեցաւ (283): Սոյն իմաստուն տեսութիւնը կը կրկնէ եւ Ալաւկայ որդին՝ իւր կանոնաց յառաջարանին մէջ: Իսկ Վարդան անսրբութեան գաղափարը ծագած կը համարի երեք պատճառներէ. «վասն գարշ տեսակին, կամ վասն անճոռնի մեծութեանն, եւ վասն անմարսական մտոցն». եւ ինքն ալ կը հաստատէ՝ թէ «ըստ բնութեան չեն պիղծք» (Ղեւտ.):

Ինչ ձեւով ալ մեկնուէր հին օրէնքը, այս ստոյգ է՝ որ իւր ազդեցութիւնն ունեցաւ քրիստոնէութեան վրայ, սկսեալ Առաքելոց օրերէն: Իրաւ է՝ թէ նոր կրօնքը խափանեց հինը եւ յեղաշրջեց անոր խտրականութիւնը: Պաւղոս կ'ուսուցանէր՝ թէ Աստուծոյ բոլոր արարածները բարի են, եւ անոնց մէջ պիղծ բան չկայ (Ա Տիմ. Գ, 4). այլ պիղծ են՝ այնպէս համարողին համար միայն (Հո. ԺԳ, 14, 20): Եւ լոկ այն ժամանակ կը պահանջէ